ԹԵՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍ 2

**1896**

ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՅԻՍ 2 № 16

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղրան. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքներր 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 րուբլ. վեցամսեան 2 րուբլի. Օտար երկրներր 8 ֆրանք. վեցամսեան 5 ֆրանք: Հասցէ: Teheran Rédaction ASTGH-AREVELIAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերն:

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով. իւրաքանչիւր բառին 1 շահի:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

...երկրորդ պարտականութիւն. Մենք ենք մեզ ստորացնողը. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Էնզէլիից. Նամակ Թէհրանից. Նամակ Հնդկաստանից. Նամակ ...թագրութեան. Կեանքի պատկերներ ...նանց շրջանից. Թղթակցութիւն Աստղ-Արեւելեանի Ռաշտ. Ամուսնութեան արգելութիւնը. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ—Հայկական Հարց. ՆԱՍԻՐԱԿԱՆ Պարսկաստանը Վեհ. Նասրեդին Շահի թագաւորութեան օրով: ...'ի Հայաստան.

## ՄԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

----

Ամեն անգամ, երբ Հայի կեանքի մէջ ...տուում է մի արտակարգ գործունէութիւն, ամեն անգամ երբ բնութիւնը ...ցաւալի թէ բերկրալի երեւոյթներ... նրա զգացմունքների վրայ ճնշում է ...ում, նա, իւր այդ զգացմունքները ...ած զլութիւնից ազատելու համար դիմում է եկեղեցու բարերար ազդեցութեանը: Այդտեղ հաւատում է գտնել իւր սրտի սփոփանքը, իւր մորմոքիչ ցաւերի սպեղանին և չէ սխալւում, չէ զղջում երբէք, այդ ժամանակ մի բարոյական զգացմունք տիրում է մարդկային ուղեղի վրայ և հետզհետէ սկսում է բառնալ անհետացնել կուտակուած տանջող շոգիները:

Պարսկաբնակ (առաւելապէս Թէհրանաբնակ) հայ գաղթականութեան վերջին օրերում կրած սոսկալի վիշտը, իր եզական Պաշտպանից զրկուելու նկատմամբ ժամանակին գուժելու դժբաղդութիւնն ունեցանք, այս անցեալ կիւրակէ այդ որբացած ժողովուրդը հաւաքուած էր Ս. Գէորգ եկեղեցում իւր Օգոստոսափառ բարերար և պաշտպան Նահատակ Շահինշահի համար հոգեհանգիստ կատարելու, մի անգամ հրապարակով յայտնելու այն անհուն կսկիծը այն ցաւն վիշտը, որով համակուած է այսօր և որքազան ազդեցութեան շնորհիւ թեթեւացնելու նրան:

Պէտք է խոստովանած, որ Փոխանորդ Հօր լուրջ կարգադրութեանց շնորհիւ այդ հոգեհանգիստը ազգային մի մեծ ցոյցի երեւոյթն ունէր և պատուաբեր լինելու որեւէ մանրամասնութիւնից զուրկ չէր.

Ն. Մեծ. Սադր-Ազամի կողմից ներկայ էր Վսեմ. Մուշդէշառ-էլ-Վզարէն 1) և ուրիշ շատ պատուաւոր պարսիկներ իսկ հայ գաղթականութիւնը իւր խուռն բազմութեամբ մանաւոր պատկառանք էր ներշնչում խորհրդաւոր տեսարանին:

Աշխարհ ամենայնը սկսելով առաջնորդական երաժշտութիւնը նւագում էր մի տխուր եղանակ. նրան արձագանք էր տալիս զգացուած ժողովրդի (մանաւանդ համեստ սեռի) հեկեկանքը ձայնը. բանազգօսիկ բան չը կար, բոլորը պարզ էին և ցոյց էին տալիս, որ բղխում են զգացուած անկեղծ սրտերից:

Փոխանորդ հայրը համառօտ կերպով բացատրեց օրւայ նշանակութիւնը և հրաւիրեց աղօթել նահատակ և ամենասիրելի թագաւոր Հօր հոգւոյ փրկութեան համար, աղօթել նաև Նորա Օգոստոսափառ ժառանգ Վեհ. Մուզաֆֆէրէդդին Շահի թանկագին կենաց համար և յուսալ, որ այդ կոնքն եւ նոյնքան բեղմնաւոր, նոյնքան սիրելի կը դառնայ պարսկահայի համար, որքան իւր ամենաչքնելի Նասրէդդին Շահ Կայսերը:

1) Ն. վսեմութիւնը 90 թւին Էրզրումի կոտորածի ժամանակ պարսից կոն. Գեներալն էր եւ այդ տխուր օրերում արդէն ցոյց է տւել իւր մարդասիրութիւնը

## ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵԶ ՍՏՈՐԱՑՆՈՂԸ

----

Թէ պարբերական մամուլի և թէ առօրեայ կեանքի մէջ յաճախ սրտի նկատումներ որ մեր հոգեւորական դասի միջից դեռ արմատախիլ չէ եղել տխրացուն յատուկ տգետական և բռնակալ յատկութիւնը: Նրանք, հասարակ ժողովրդի

## ՖԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՊԱՐՍԿԱՍՏԱՆԸ ՎԵՀ. ՆԱՍՐԱԴԻՆ ՇԱՀԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՕՐՈՎ

----

*...Փառաւորապէս գեղեցկացաւ, եւ զարծակեցաւ կայսրութեան մայրաքաղաքը՝ Թէհրան: Եւրոպական ճաշատներ եւ ապարանքներ զարդարեցին նրան. Կայսերական քաղաքը հասունացաւ եւ իր ճիղերը տարածեց ...կաստանի եւ Եւրոպայի քաղաքների մէջ. նաեւ եւրոպական պանդոկներ ...տատւեցան եւ սկսան գործել: Փողոցները լուսաւորւեցան կազով եւ քաղաքի հնաւոր անկիւններն միմեանց ...ցան հեռախօսի թելով:*

*...արէնական Շահը իր բազմաթիւ ...ճանապարհորդութեանց հետ ունէր նաեւ ...կառուցման երկրատար ծիրը: ...գեղարհեստ եւ իմաստալից ...ները գրած է նաեւ դէպի Եւրոպայ արած ճանապարհորդութեանց մանրամասն նկարագիրը, որ յայտնում է խոստովանել աշխարհի իրեն ներշնչած տպաւորութիւնները եւ որն իր ուղիղ դատողութեան եւ գեղեցիկ գրչի յատկանիշն է:*

*Իսկ թէ այդ բարեբաստ թագաւորութեան ժամանակ որքա՜ն բարիք եւ հայրախնամ սէր են տեսած հայերը բարեգութ Շահինշահի կառավարութիւնից՝ վեր են ամեն գովասանքից եւ գրչով արտայայտելու անկարող: Այդ խաղաղիկ Վեհապետի ժամանակումն էր որ պարսկաստանի տարագիր հայերը իրենց մայր ճանաչեցին իրենց եւ ճանաչւեցան: Վեհափառ Շահը իր թագաւորութեան սկզբից իսկ մտադրութ մի սէր տածեց դէպ ի այդ դժբաղդ ազգը եւ կարծես թէ որդեգրեց նրան: Հային ամեն տեսակ ապահովութիւն եւ իրաւունքներ արւեցան ազատօրէն պաշտելու եւ դաւանելու իր կրօնը ու լեզուն եւ միջոցներ հայթայթւեցան նրան ի լոյս ընծայելու իր գեղեցիկ ծիրքերը, արքունի դերձակներ, ոսկերչապետներ եւ մինչեւ անգամ դեսպաններ ու նախարարներ տւին հայերը եւ կայսերական կառավարութեան հայրական հովանու ներքեւ հայերը աճեցան եւ զարգացան տամանդ ու կրթութեամբ:*

*Եւ վեհափառ Շահը պարսկահայոց այս բարոյական վերածնութեան գըլխաւորապէս նպաստեց իր մանաւոր հրամանագրերով, որով ազատւեցան հայոց դպրոցները եւ որոնց միջից կարիճներ միայն տարեկան 200 թումանի այն մշտական շնորհն որ Ռուսմնասիրաց ընկերութեան տրամադրութեան յանձնեցաւ իր վարժարանի յառաջադիմութեանն նպաստելու համար:*

*Ինչպէս տեսանք՝ Նասրէդդին Շահի թագաւորութիւնն իր այս 50 տարւայ ընթացքում քաղաքական նշանաւոր մի դէպք չներկայացրեց մեզ: Նա սուր քաշելու առիթ չփնտրեց երբէք, եւ եթէ երբէք քաշեց՝ այն էլ իր երկրի եւ իր պատւի համար էր: Պատերազմն ինքնին արդէն ատելի է ամեն երկրի եւ ամեն ժողովրդի համար եւ Նասրէդդին Շահն առանց իրեններն եւ այլոց արեան մէջ փառք փնտռելու՝ միշտ հաստատ եղաւ խաղաղ մի քաղաքականութեամբ իր երկիրը ու ժողովուրդը զարգացնելու եւ ծաղկեցնելու:*

*Այդ խոհեմ քաղաքականութիւնն արդէն 50 երկար տարիներից ի վեր նրա պերճափայլ անւան համար հիւսեց անթառամ փառաց անթառամելի մի պսակ, եւ պատմութիւնը բաց պիտի անէր յետն էջեր, իսկ նրա ժողովուրդը եւ մանաւանդ հայը որ չէ կարող երբէք մոռանալ իւր սիրելի նահատակ թագաւորին, տեղ տաւ նորան իւր սրտի մէջ:*

*Ա. Մարգարեան*

